



ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԻԼԻՔԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ նախածեռնութեամբ եւ ծանօթ մարդասէր Պ. քրաֆթ-Պօնաուի հրաւէրով Նոյեմբեր 12ին խորհրդակցական ժողով մը գումարուեցաւ ֆարիզի Ազգ. Մատենադարանին մէջ, նպատակ ունենալով ուսումնասիրել հայկական սանատորիոմ մը ստեղծելու կարելիութեան եւ միջոցներուն մասին: Ներկայ էին փրոֆ. Մալլէր, Պ. Պիանքի, Պ. Ալ. Խատիսեան (Մ. Ա. ընկերակցութեան կողմէ), Տիկին Սթամպօլեան (ֆարիզի Կ. Խաչ), Պ. Մալլէզեան (Հ. Բ. Ը. Մ.) Պ. Զամալեան (Եւրոպահայ Կ. Խաչ), Պ. Բաշալեան (Գաղթականաց Ցանձնախումբ), Տքթ. Լ. Գրիգորեան («Բուժամբ»ի եւ Ի բացակայութեան Տքթ. քօյօլեանի՝ Բժշկ. Միութիւն):

Պ. քրաֆթ-Պօնար հայ Թոքսխտաւորներուն համար 60 անկողին Նոց մասնաւոր բուժարան մը ստեղծելու անհրաժեշտութիւնը պարզեց եւ ներկայացուց ծրագիր մը, նախատեսելով տարեկան մօտ 1 միլիոն ֆրանքի ծախք մը, առանց հաշուելու շէնքի շինութեան ծախքը: Տքթ. Գրիգորեան առաջարկեց իբրեւ նպատակ հետապնդել ոչ թէ սանատորիոմի մը շինութիւնը, այլ Թոքսխտին դէմ ընդհանուր պայքարը, այդ պայքարին հիմ ընդունիլ նախ կանխարգելական միջոցներ ու յետոյ ջանալ, հայ Թոքսխտաւորներուն յատկացուելու համար, մահճակալներ վարձել պետական կամ անհատական բուժարաններու մէջ, փոխանակ մեծածախս բուժարանի մը շինութեան ձեռնարկելու Այս առաջարկին շուրջ կարծիքներու փոխանակութենէ ետք ժողովը ընտրեց յանձնախումբ մը (Պ. Պ. Զամալեան, Մալլէզեան. Բաշալեան, Տքթ. քօյօլեան եւ Տքթ. Գրիգորեան), պաշտօն յանձնելով անոր մանրամասնօրէն ուսումնասիրել խնդրին մասնագիտական եւ նիւթական կողմերը եւ տեղեկագիր ներկայացնել: Որոշուեցաւ նաեւ որ Պ. քրաֆթ-Պօնար դիմում ընէ Ռոքֆէլէրեան Հաստատութեան մօտ, խնդրելու համար անոր նիւթական աջակցութիւնը:


— ԱՐԺԱՆԹԻՆՅԻ ՄԵՆԱՀԱՐՈՒՍՏԻ ՄԸ աջակցութեամբ ֆարիզի արուարձաններէն մէկուն մէջ հիմնուած է հիւանդանոց մը (*Hôpital Sainte-Isabelle, 24 Boulevard du Château, Neuilly-sur-Seine*), ուր կարօտ հայմանդամներուն ձրի խնամք եւ արուեստական գործիքներ (ձեռք, ոտք եւլն.) կը տրուին: Ընդունելութեան օրերն են՝ երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ, ժամը 9ին: Մեր հայրենակիցներն ալ կրնան օգտուիլ այդ հաստատութենէն:

— ՓԱՐԻՋԻ ՀԻՒԱՆԿԱՆՈՑՆԵՐՈՒ ԲԵՐԱՆԻ հիւանդութեանց ծանօթ

մասնագէտներէն ճքթ. ֆիէռ Բօպլէն մասնաւոր դարմանատուն մը բացած է ֆարիզի մէջ (30, rue de Rennes, Cour du Dragon) ուր ձրի կը խնամէ իր մասնաւոր մեթոսով. երախաներու եւ չափահասաներու կզակի, բերնի, լեզուի տծելու միջինները ինչպէս նաեւ շնչառական անկանոնութիւնները: Ընդունելութեան ժամերն են՝ ամէն օր ժամը 8,30էն 9,30:

— ՅՈՅՆ ԲՅԻՇԿԻ ՄԸՆՍԽԱՃՆՆՈՒԹԵԱՄԲ Եւ յոյն մեծահարուստներու օժանդակութեամբ համաձայնութիւն կայացած է ֆարիզի Ֆօշ հիւանդանոցի տնօրէնութեան հետ, կազմակերպելու համար սոյն հիւանդանոցին մէջ յատուկ բաժին մը յոյն հիւանդներու համար, որոնք պիտի դարմանուին եւ խնամուին յոյն բժիշկներու եւ հիւանդապահներու կողմէ:

Իսկ ե՛րբ կը բացուի հայկական հիւանդանոց մը...



Ա. Գ.— ՊՈՒԵՆՈՍԱՅՐԵՍ.— 1. Գլխի իւղին եւ Թեփոտմըն մասին պատասխանած ենք ասկէ առայ: 2. Աչքերու ներքին կողմի բոյներուն մէջ գտնուողակերբ դաժ պէս կարմիր արտադրութիւնները (*pterygion*) զեղով չեն անյայտանար, այլ գործողութեամբ: Անպատեհութիւն մը չունին. կրնար ձգել:

Յ. Ի.— ՉԸԼՍԻ.— 1. Բերնին մէջ, շրթունքներուն ներքին երեսին վրայ մերթ ընդ մերթ երեցող սպիւր չափ եւ մշտեղը նախ կարմիր, յետոյ ճերմակ կեղ (վերք) որ շատ կը ցատի եւ 8,10 օրէն կ'անհետանայ, հաւանաբար *aphles* կոչուած հիւանդութիւն է (բատ ձեր նկարագրութեամբ): Այդ վերքերը արդիւնք են աղաներու, լինտերու եւ ընդհանրապէս մարտոզական գործարաններու գէշ վիճակին: Ձննկ տուէր ձեր աղաները եւ ստամոքսը: Երբ վերք ունենար, ձեր բերանը որուան մէջ բանի մը անզամ ցողուցէք զատմ մը գաղշ չուրով, անոր մէջ հալեցնել կտր թիչ մը *bicarbonatate* կամ *salicylate de soude*: 2. Գլխի իւզտելու եւ անոր հետեաներով հերթափութեան մասին կարդացէք վերեւի պատասխանը:

Ն. Ջ.— ՓԱՐԻՋ.— 1. Շաղարաւոր գիտուններ կ'աշխատին սիֆիլիսը բանի մը ներարկումներով բուժող զեղ մը գտնել. դժբախտաբար տակաւին չեն յաջողած: Նոյնը՝ ուրիշ միքրոպային հիւանդութիւններու համար: Պատճառները բարդ են եւ կախում ունին միքրոպէն եւ մարդկային կազմէն: Հիմնական դժուարութիւնը հոն է որ պէտք է գտնել զեղ մը որ նախ սզով միքրոպէն վրայ եւ յետոյ բաւականին Թունաւոր ըլլայ՝ գայն արմատապէս բնաջնելու համար, բայց ոչ այնքան՝ որ հիւանդն ալ մեռնի: Դժբախտաբար յաստի միքրոպը աւելի լաւ կը դիմանայ քան մարդկային կազմը: 2. Էրիթիմ 606ը «գորտ» էր սիֆիլիսի միքրոպէն համար, բայց նաեւ հիւանդներուն համար: 606ը կատարելագործուելով՝ դարձաւ 914, նուազ վտանգաւոր հիւանդին համար, բայց նաեւ նուազ ազդեցիկ միքրոպէն համար:

Գ. Ճ.— ՆԻՒԵՐՈՐՔ.— Սրտներու յանկարծական եւ ցաւախիթքիկումները, որոնք կը պատահին գիշեր ստան, արդիւնք են պառկելու գէշ դիրքի մը կամ շեղի մը եւ երա-